Ընկալ զորդւոց քոց սիրատուն մաղթանս սըրտից անդադար,
Խուն փոխարէն լուսոյն զոր մեզ ծագես սիրով մշտավառ.
Զաջ Անեղին Քեզ հովանի մաղթեն որդիք միաբան.
Պահպանեսցէ ի փառս ազգի զՀովիւդ քաջ անսասան.
Երկարեսցէ զկենացըդ թել, պըսակ գլխոյդ անթառամ.
Յաւերժասցին Քո յիշատակք ի սիրտ որդւոց յամայր ամ,
Պայծառասցի ի լոյս փառաց քոց մայրս հանուրց Հայաստան.
Եւ բիւրաւոր գըրեսցէ որդւոցն ի տաճարիս ապաստան.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ
Ի դիմաց աշակերտաց Չորրորդի Դասարանի:

## ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ (*)

Լուսաւորեաց Երուսաղէմ,
Հայկեան գրոհս Սիոն սուրբ,
Ընկեա ի բաց ըզբող նըսեմ,
Եւ արկ ըզշող՝ շըղարշ նուրբ.

Ամբարձ ըզքեւ շուրջ զաչս քո,
Տես ըզմանկտիդ խուռնընթաց.
Մանկտի ծընունդ քո սուրբ ծոցոյ
Սըփռեալ ի ծագս աշխարհաց.

Քեզ ակն ունին կըղզիք Թարսիս,
Հայք որ ի սփիւռս պանդըխտին,
Յերս արեւու ի հիւսիս,
Հարաւ ի մուտս արեգին.

Հնայս գոգջիր, ծիլ են սոքա,
Ա՜մպ ընդ եթեր սըլացեալ,
Թէ աղաւնեաց երամ որ գայ
Զագախուանեալ աւասիկ.

Տես եւ խընդա եւ զարմացիր,
Ազգաց ի քեզ կուտի գանձ,

Իմաստութեան գանձ լիաձիր
Ձօն քան զականս պատուականս:

Փեռեկեսցին դրունք տաճարիդ
Զոր աջ Վեհիս քո կանգնեաց.
Լըցցին սըրահք քո եւ գաւիթ
Ի բազմութիւն որդեկաց.

Լիբանանու փառք եւ պարծանք
Սարդ եւ սօսի նոճ եւ մայր,
Եկեալ եկայ մօր անեմ պերճանք
Ի քոյդ զեղցին վեհավայր.

Փառաւորել զտեղի սուրբ
Հօր Միածնին շողակաթ
Եւ զՃեմարանդ՝ լոյս իմաստից
Հայոց շողել ի ճակատ.

Ոչ եւս մըտցէ քեզ արեգակն
Եւ ոչ ի փուլ գայ լուսինն,
Զի Տէր լիցի քեզ լոյս համան,
Լոյս եւ Օծեալըն նորին.

ԹԱԴԷՈՍ ԶԱՔԱՐԵԱՆՑ
Ի դիմաց աշակերտաց Երրորդի Դասարանին.

(*) Ի բան Եսայեայ (գլ. կ. 1)

## ՆՈՒԱԳ

Ո՜վ հըսկայից յաւերժից դու մըրցանաց ասպարէզ,
Արարատեանըդ նահանգ եւ որ ըզքեւ պարպած
Լերինք բարձունք Աստուծոյ, տեսէք երբէք դուք հանդէս
Մերոյս համգոյն հանդիսի պանծալահրաշ գերապանծ.

Ըզձեզ երբեմն ընթադրեալց աշխարհական ջուրց հեղեղ.
Ապա մըռայլ գիշերս տըգխութեան թըլխպայորդ.
Ապա արեան ճապաղիք զոր անողորմ սուրն եհեղ.
Մինչեւ կաթեաց յեթերաց շող լուսափին անաղօտ։

Աւ նոյն շողիւ նոր Գրիգոր՝ մեծ Հայրապետըդ Գէորգ,
Դու մեզ տաճար կանգներցիր եօթնաջահեան ուղփաճեմ,
Խուռն ընթանան այսր ահա որդիք Հայկայ բիւրաւորք։

Բոլորեցան ամք երկու, կըրկնեցան փառք քո վըսեմ,—
Մաղթեմք, ո՛վ Հայր, զանուն քո դարք կըրկնեսցեն յաւիտեան.
Եւ պանծասցի Արարատ ի Գէորգեանս ճեմարան.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՖԱՐԵԱՆՑ
Ի դիմաց Աշակերտաց Երկրորդի Դասարանին.

## ԵՐԵՑՓՈԽԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՅՍ ԻՆՔՆ ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ.

(Շարուն. և վերջ.)

Վեցերորդ՝ Թիֆլիզի մէջն ամենահին եկեղեցիքն էին Բերդի և փոքր Մողնի առացեալներն։ Էս վերջինս էր շինուած յերկոտասաներորդ կամ յերեքտասաներորդ դարումն՝ մի և նոյն գաւթումն, ուր է այժմեան մեծ Մողնին։ Անդ կ'յաճախէին ուխտաւորք Սուրբ Գէորգի տօնի օրն, մանաւանդ Արարատէն գաղթեալ Հայերն, յորոց և բաւականին արդիւնք կստանար եկեղեցին, ըստ որում և նորա արդիւնքն կվերաբերէին մեծ Մողնին։ Խ. . . . եանցն չնայելով հին Մողնիէն ստացեալ արդեանցն, ուխտաւորների ջերմեռանդութեանն և նրա հնութեանն և հին ճարտարապետութեանն, փոխանակ պահպանելոյ զայն սրբութեամբ, չ'գիտեմք յիմէ՞ դրդեալ՝ աշխատեց ընդդէմ կամաց ժողովրդեան խորտակել զայն, վասն որոյ և քաղաքական ճարտարապետ բերեց, ըստացաւ նրանից վկայական որպէս թէ խարխուլ է և շուտով կխոնարհի, ուստի պէտք է զայն քանդել, և համոզեց առ այս և զվիճակաւոր առաջնորդն և այն առանց Ս. Էջմիածնի Սինօդի հրամանի՝ ըստ զօրութեան օրինաց։ Էս նուիրական բազմադարեան շինութեան կործանմանն ոչ որք Հայ վարպետ չ'յանդգնեց ձեռնամուխ լինել, ուստի պարտաւորեցաւ Խ. . . . եանցն տալ 1000 ռուբլի կապալով յոյն արհեստաւորների, որք կործանելոյ ժամանակին մեծ քանակութեամբ վառօդ գործ ածեցին, և նոյն իսկ յոյներն կ'զարմանային նորա ամուր զանգուածի և դժուարաւ կործանելոյ վերայ, և կ'վկայէին թէ երբէք էն կործանուող շինութիւն չէր։ Էս եկեղեցւոյ նիւթը բաշխուեցաւ յումպէտս քահանայից և այլոց, որք կրեցին և տարին գործածեցին իւրեանց տան և այգեաց մէջն զանազան շինութեանց վերայ ի թերահաւատութիւն ջերմեռանդ ժողովրդեան։ Էս եկեղեցին կործանելոյ ժամանակն Խ. . . եանցն բացակայ էր և եկեղեցական հաշիւներն լինելով աւագ քահանայի ձեռքին, և սա ի ներկայութեան քանի մի անձանց զկնի հաշուատեսութեան երևեցաւ 360 ռուբլի մնացեալ վերջնոյ մօտն, ի վերջոյ վճարեցաւ։ Աւագ քահանայն վերադարձնէ երեցփոխանին այն պակասորդ դրամն։ Նա վճարումէ բաց ի 120 ռուբլիէն, որի մասին քահանայն մուրհակ էր տուել յետոյ վճարել։ Զկնի ժամանակ անցանելոյ, երեցփոխանն ցոյց է տուել, այս ինքն գրել է մատենումն՝ թէ փոքր Մողնի եկեղեցւոյ քանդելոյ ժամանակն փոհլոբաշի չկար և աւագ քահանայն նորա պաշտօնըն կատարելով*), վասնորոյ հատուցի նորան 120

(*) Զափազանցութիւն կերեւի։

Մ. Խ՛Է.